

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պաշտարանի համար	12 ֆր.
արձևի	7 "
վեցումս	7 "
Արտասահմանի համար	15 ֆր.
ստորակետի	8 "
վ.գումս	8 "
Ավերակայի համար	3 ֆր.
ստորակետի	3 ֆր.
վեցումս	1.50 "

Ծանուցումն տղր և ուրիշ երեսիս համար 40 սակրիս իսկ վերջին երեսիս համար 20 սակրիս է. երեսիս և էջի սկզբուններու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վաստայի համար ձեռքի 40 սակրիս է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՄԱՍԻՄԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամի կը խմբագրութան հասցիս

Редакция на вѣстанки "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoun" Varna (Bulgarie)

Պաշտարանի համար ձեռքի

15 ՍԱԿՐԻՍ

Արտասահմանի համար ձեռքի

20 ՍԱԿՐԻՍ

Գրութիւնքի եւ չին տրուի

ՇՈՒԹՅՈՒՆԻ ԲԱԺԱՆՈՐԴՈՒՆԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵՆԻՎ ԿԱՐԷ

## Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Դիւանոս Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԵՆԷ ԵՐԱՆ. ԽՈՒՆՈՐԱՆԱ ՍՕՅՆԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՆ ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՍՍԵՐՈՒՆ .

Տոմսակ գնելի փոփոխողները կրնան իրեն գրիմել՝ Զար-Պորիս փողոց Վաստայ

## ՌՈՒՍԻԱ

(10)

Ինչ որ երկար ժամանակէ ի վեր կըսպասուէր. կատարուեցաւ վերջապէս: Յարիզմի վերջին բեկորները, աղուէտորդի Վիթէն առաջ քշելով՝ նիւստայէն նոր միլիարներ փոքնել տալէ անմիջապէս ետքը, «սպասող զրին» անոր ոտքերուն տակ, ինչպէս կըսուի ռամկօրէն:

Տխրահոշակ Վիթէի այս միամեայ գործունէութեան հաշուեկշիռը չէ որ կուզենք ընել հոս. այլ թէ ինչ նոր կացութիւն կըստեղծուի Ռուսաստանի համար կօրէմքինեան նախարարութեամբ:

Առաջին օրէն արդէն յայտնի եղաւ որ Վիթէի նախարարութիւնը անկեղծ բարեկարգիչ մը չէր Ռուսաստանի համար. հպիւ հոկտեմբերեան ազատութիւնները շնորհուած էին, երբ մի. եւնոյն ատեն սարսափելի բռնութիւններ, ճնշումներ, հալածանքներ ի գործ դրուեցան քաղաքացիական այդ շնորհուած ազատութիւնները վայելել և անոնցմէ օգտուի իւր զոյններուն վրայ: Յեղաշին ատելութիւնները այդ երկերեսանի կառավարութեան անարգ գործակալներուն ձեռքով արժարձուեցան, քաջալերուեցան ու պաշտպանուեցան, ու հայ, հրեայ, բոլոնիացի, բոլոր հպատակ ցեղերը ապրեցան կեանքի արտասովոր զաւնութիւնները: Յարիզմի փոխ չէր ընել թէ անոնց ազազակները քաղաքակիրթ աշխարհի մէջ ահեղ յուզումներ կը յարու-

ցանէին. և ամէն անգամ որ պղտիկ գիտողութիւն մը ըլլար, բարեկարգիչ կոմս Վիթէ խաժաճուկը առաջ կը քշուէր. ո՛չ ապաքէն ասանկ փոխանցման շրջաններուն բնականօրէն կը պատահին բացառիկ չփոթութիւններ. Վիթէն, սպասուկան լիարժըք մեծածաւալ Ռուսիոյ, ամէն բան պիտի բարեկարգէր և ազատ Ռուսիա մը պիտի ստեղծէր: Իսկ Վիթէն, աչքերը մաքրազէլական փայլատակուով մը ցոլացնելով, կը ժպտէր Եւրոպայի, ինքնավստահ հպարտութեամբ յայտնելով սակայն որ դրամի պակասութիւնը իր ձեռքերը կը կապէր, և լուրջ բարենորոգման մը համար նոր հսկայ փոխառութիւն մը անհրաժեշտ էր: Պրանսա հակառակ էր նոր գահլիծին, որուն մէկ քանի անգամները երբեմն բուն հակառակորդներ էին նոյնիսկ ֆրանսոսներու գաշակցութեան մը գոյութեան, կամայականայ ստորագրեցին նոր փոխառութիւնը: Յարիզմը հրճուեցաւ, և անմիջապէս ճամբայ տուաւ Վիթէին, որուն պէտք չունէր այլեւս, իր յամառ յետադիմ կանոնները յայտնապէս գործադրել վճռած ըլլալով:

Նոր նախարարութիւնը, յայտնի գոյն մը չի ներկայացներ որոշապէս, քանի որ կօրէմքին վերջին ժամանակներս, հրապարակային գործունէութիւն մը չէ ունեցած. այլ իր բոլոր ժամանակը «խորհուրդ» ներու մէջ անցուցած է, ուրկէ չէ կարելի զանազանել թէ իր քաղաքական դաւանանքները ժամանակին հետ փոխուած են, թէ կը մնան առաջուան պէս:

Կօրէմքինի տնցեալը շատ վստահելի երաշխաւորութիւն մը չի ներշնչեր Ռուսիոյ ապագային համար: Բոպէտօնօձէվի այդ խրտուիլակը պահպանողականութեան սիւն մըն է, և իր օրով ազատական սկզբունքները յաջողութիւն գտնելու հաւանականութեան շատ հեռու են:

Գալով տնտեսական վիճակին, հակառակ նոր փոխառութեան ընծայած բոլոր զեղեցիկ հեռապատկերին, բոլոր սուրքերու յաւելումներուն որոնք ծայր աստիճանի հասած են այլեւս, տասնեակ ամիս մը եւս միայն ցարիզմը սոկալու ուժ պիտի կրնայ ունենայ, ու յետոյ սոսկալի սնանկութիւնը պիտի հասնի ամէն հոշիւ տակն ու վրայ ընելով: Տարբերութիւնը միմիայն թուականի ինդիք է: Այն օրը, երբ ցարիզմի պատուիրակները եւրոպայի մերժման հանդիպին նոր փոխառութեան մը համար, իսկոյն պիտի դիմեն սնանկութեան. ու որքան հեռու ըլլայ այդ վայրկեանը, այնքան աւելի սարսափելի ու ահեղ պիտի ըլլայ նաեւ անոր պատճառելիք զխաւը:

ԶԱԻՆ

## ՆԱՄԱԿ ԼՕՆՏՕՆԷՆ

Կովկասահայ կանանց ազերսագիրքը ծարիցային. — Ի՞նչ է արդիւնքը:

Երբ կրնեն թէ հայերը անշարժութեան են դատապարտուած, ատի ամենամեծ սխալներէն մէկն է որ կը գործեն. որովհետեւ, անգործ չենք — հեռու մեզ է... Մանաւանդ այս վերջին մէկ-երկու տարուան յամբոխային» ճիգերնիս վէճէ անդին է: Ի՞նչ է գործունէութիւննիս, պիտի հարցուի, Զինային դիմադրութիւն, ապստամբութիւն, եւն. ոչ պիտի պատասխանեմ, այլ զրկեցինք ու կը զրկենք հարկերնորով պաղատագիր հարկերնորով հեռագիր, հազարներով նամակ եւ վերջապէս հսկայ գործունէութիւն մը թուղթի եւ գրի, որոնց վրայ ծախսուած գումարով, կրրուած, առանց չափազանցութեան ըսել որ Հայաստանի գաւառներէն մէկը կը գնուէր, նամանաւանդ զրկուած աղերսագրերու հաշիւը ըմբռնողութեան վեր է, Ազերսագրեր զրկեցին հայ յեղափոխականները, աղերսագրեր զրկեցին հայ քահանաները, խանութպանները, վերջապէս ամէն գոյնի ու պաշտօնի սէր հայեր, ցոյց տալով որ կարծուածին ու խոսուածին չափ անշարժ ժողովուրդ մը չենք: Սակայն այս բոլորին վրայ

պակասութիւն մը կար — մեր հայ իգական սեռը տակաւին ինքնուրոյն բան մը ըրած չէր. եւ ահա կովկասահայ կանայք, ցոյց տալու համար որ հայ կինն ալ անտարբեր ու անզգայ էակ մը չէ, աղերսագիրք ու գրիմում մըն ալ անոնք են ուղղած ծարիցային ինչպէս նաեւ Վորոնցով Տաշլովի կնոջ, որպէս զի իրենց ներկայ անտանելի կացութեան նեցուկ մը հանդիսանան: Փոխարքայի կինը սուած է հետեւեալ պատասխանը — «Ամուսնոյս հրամանով, ընդհանուր կառավարիչը (Թիֆլիզի) թողած է ձեզ գալու: Աստուած կօցնէ. ամէն ինչ կը խաղաղի: Ցաւալի էր ինձ կարգալ ձեր հեռագիրքը»:

Ձեմ գրտիր ծարիցան ինչ պատասխան պիտի տայ աղերսագրին, սակայն, սպասելով ստոր, միեւնոյն ատեն կուզեմ թարգմանել հոս յիշեալ աղերսագրին պատճէնը, որու ամբողջութեան «Տէյի-Նիւզ»ի մէջ միայն հանդիպեցայ անզրիական մամուլին մէջ:

Աղերսագիրքը հետեւեալն է: —

Մենք. հայ կանայք Շուշիի, հեռաւոր Կովկասի Նիխաբէթուպուրոյ կառավարութեան մէջ, ձեզ կը դիմենք աղօթքով, ո՛վ ամենաողորմած կայսրուհի, եւ, ինչպիսի յոտս ձեր, կը հայցենք լսել մեր ցաւը, եւ ձեր հզօր խօսքով վերջ մը դնել այն անասելի արհաւիրքներուն՝ որ կը կատարուին մեր աչաց առջեւ մեր քոյրերուն ու եղբայրներուն՝ գահին անմիտ ծառաներուն կողմէ, որոնք, փոխան անդորրութիւն ու ապահովութիւն բերելու, կը բերեն ատերու, վտանգ ու անպատուութիւն ձեր վեհափառութեան ինքնա կամուսնոյն միշտ հաւատարիմ հպատակներուն, կուղիէք մեր մաղթանքները ձեզ, ո՛վ վեհափառ Տիֆլիս, որովհետեւ դուք, եւ միայն դուք, որպէս կին, կրնաք թափանցել անհուն խորքերը մեր թշուառութեանց եւ ցոյց տալ ձեր անպարագիր անյիշաչարութիւնը՝ ատոնց դադարուած հրամայելով:

Թաթարներու մեզ հայերուս խոզխոզման արիւնարբու սարսափներէն տարի մը յետոյ, որու միջոցին մեր ամուսինները, հայրերն ու եղբայրները թուժք հանդիսացան թաթար խոզմանին դէմ, պաշտպանելով իրենց ինչքը, օճախն ու տուներ, առաւել եւս զարնուրելի դժբախտութիւններ հասած են մեզ, որոնց դէմ մեր հայրերը, եղբայրները ու ամուսինները ոչ ոյժ ունին եւ ոչ ալ հնարաւորութիւնը դիմադ-

բերու։ Հակառակ հայոց ճշմարտ հաւատարմութեան հանդէպ սուսա կան գահին, ոչ ալ հաշուի առնելով անոնց անձնուրաց ծառայութիւնները ուս պետութեան պատերազմի դաշտին կամ քաղաքացիական կեանքի մէջ, հալածանք մը առաջացած է իրենց դէմ, որուն նմանը կարելի չէ յիշել մեր պատմութեան մէջ, նոյն միւսիլման վեհապետներու գերիշխանութեան միջոցին եւս։ Մ'ըր գաւառին մէջ ազատ արձակուած է քաղաքները խռովելու քաղաքները որպէս թէ խաղաղեցնելու հայերն ու թաթարները եւ թերեւո՛ւ անոնց միջեւ անդորրութիւն ու կարգ։ Բաժանուած, ենթազննապետ վէճերն իրարմանատարութեան ներքեւ, որու գործողութիւնները կը կառավարուին գաւառապետ Ֆրէշիսէ եւ պաշտօնեայ էրմօլօտէ, այնպիսի սարսափներ են յառաջացուցած գաւառի խաղաղ հայ ժողովրդին միջեւ, որու նկարագրութիւնը արիւնը երակներուն մէջ կը ստեղծէ։ Մերուններու կողմէ ըրբ ունի արդե՛ր հացը կը մերժուին, զենքեր գրաւելու պատրուակին տակ քաղաքներ կը մտնեն տուները, բռնի կռուներ արժէքաւոր առարկաները, կը կտորտեն ու կոչնչացնեն գիւղացիին վերջին փայտը կահկարասին, կը պարպեն գիւղացիներու շտեմարաններուն խեղճուկ մնացորդները աղտոտ տեղուանք ու կը կ'իսկուան։ Գիւղացիները կը ծեծեն ու կենթարկեն է՛ն զարհուրելի տանջանաց, որոնցմէ յառաջացած մահը հաւաքուապարտ մը չէ ու զեռ կընեն այնպիսի բաներ՝ որ նոյն իսկ չըւար թշնամիներու երկրի մը մէջ։

Ու հոս, թաթարներու հրկիզած գիւղերուն եւ քաղաքներուն զեռ եւս միացող աւերակներուն մօտ կը տեսնուին նոր աւերակները քաղաքներուն, եւ թաթարներու զոհերուն, զեռ խնամ գերեզմաններու կողին քաղաքներունը, եւ այս բոլորը կը գործուին իրենց հրամանատարներու աջաց տակ եւ, ինչ որ առաւել ահառելի է անկարող կնոջ մը հոգւոյն խորքերը չը յուզել, այն է որ կը պղծեն ամենէ նուիրական բանը կնոջը—իր անարատութիւնը, Ամուսիններու, եղբայրներու եւ հայրերու աջաց առջեւ կը բռնաբարուին կիներ, քոյրեր, աղջիկներ, վաթ-

սուն տարեկան կնոջմէն մինչեւ տասնեւ մէկ տարեկան աղջիկը... նոյնիկ զեռ նոր յղացած կիներն սլ զերծ չը մնար... Այսպիսի սարսափներու դատապարտուեցան Մարտ 28էն ի վեր հայ գիւղերէն թակ, Թուրք, Աղբիւ, Թուրքի Սուս, Չէրթազ եւ ուրիշներ մեր գաւառէն։ Ասոնց պատճառաւ բնակիչները չը նայելով մեր բլուրներու ձմեռնային ցուրտին, պարտաւորուած են ինքզինքնին փրկել անտառներու եւ լեռներու մէջ։

Ասոր համար է որ, Չերթ Վեհափառութիւն, կը համարձակինք հայցել ձեր ողորտութիւնը, եւ խնդրել անուն մեր անպատուած քոյրերուն եւ իրենց անտառներու ձմեռնային ցուրտով քարացած մանկիկներուն, հրամայել որ այս զարհուրանքները դադարին, Յայտը ձուր կը շոքինք մատուցանելու մեր մաղթանքը ձեր վեհափառութեան՝ որպէս գթատառ մայրը բոլոր հալածուած եւ ճնշուածներուն։

Շուշի քաղաքի քոյրերէն ու մայրերէն ընտրուած։

Մարիա Տօլուհանուկու Նատվժուա Ապանէսովա Տրուած ապրիլ 10, ժամը 2ին։

Այս է աղբերագիր մեր կողմիցս հայ քոյրերուն եւ մայրերուն, որ, «Ճէլի Նիւզի» բեթերագրուեալ թղթակցին խօսքով— «հեղու թեմար եւ վստահութեամբ, իր դիմումով կնոջ մը սրտին կը նմանի միջնադարեան աղօթմանուագի մը ուղղուած այն մօր՝ որ կանգնեցաւ Գողգոթայի վրայ առաւել քան զիմում մը երկրային թագուհի մը»։

Ինչ ընթացք պիտի բռնէ զգիւցիկ ցարիցան, հանդէպ խնդրարկուեալնանց, խնդրոյ առարկայ է դեռ, վերոյիշեալ թղթակցից կը փոթալ աւելցնել որ ցարուհին անգիտակ պահուած է եղեր եղեռներու մահրամանութեանց, զորս ինքն իսկ կ'սմշնայ հրատարակութեան յանձնել եւ կաւելցնէ բարկամայթ սողերով.— «Այսուհանդերձ, այս մարդկային զազաններն են որ պիտի պաշտպանեն տատանուող ինքնակալութիւնը»։

Այժմ աղբերագիր զրկողներու մէջ բաց տեղ կը գրաւեն հայ մանուկները։ Ո՞վ գիտէ, — թերեւս ստոր ալ հանդիպինք չուտով, ուղղուած ցա-

րկիչին, որ երեք տարեկան կրկուս ձօտերս եւ կրնայ բմբունի վտերն ու զրկանքները իր հասակակիցներուն։

Մ ՅՈՒԱԿ

Մայիս 3

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՓՈՒՈՐԲԱՅԻ

ՇՐՋՊԲԵՐԱԿԱՆ ՍՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

(Թիֆլիսի, Գանձակի, Բագուի եւ Երեւանի գեղերայ նահանգ քաղաքներին, 906 թ.ի ապրիլի 11—ին թիւ 7295)

Փետրվարի վերջերում եւ մարտի սկիզբներում փոխարքայի խորհրդի մէջ կայացած նիստերում, որին մասնակցում էին Անդրկովկասեան երկրի այն անդերի հայ եւ մուսուլման ազգաբնակիչներու ներկայացուցիչները ուր տեղի են ունեցել ընդհարումներ հայերի ու մուսուլմանների մէջ, մասնաւորապէս էին արվել հայ-թուրքական անկարգութիւնների պատճառները եւ առաջարկվել մի շարք միջոցներ՝ նրանց առաջն առնելու եւ վերջ աւելու համար ապագայում։

Ես իմ կողմից գտնուում եմ, որ հայ-թուրքական ընդհարումների այդպիսի մեծ ծաւալ ստանալու պատճառը տեղական իշխանութիւնների ցոյց տուած տատանումները, թուլութիւնը եւ չփութութիւնը էին անկարգութիւնների հենց սկզբնաւորութեան ժամանակ, Աւստի անհրաժեշտ եմ համարում նախ եւ առաջ ձեր առաւելին ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վրա, որպէսզի տեղական վարչական մարմինները նախազգուշութեան բոլոր միջոցներ ձեռք առնելին հայ-թուրքական ընդհարումների ծագման նոյն իսկ ամենաչնչին մի հնարաւորութեան դէմ, զիմեկով նահանգական, գաւառական եւ տեղական խաղաղարար մասնաժողովների օգնութեամբ, որոնց կազմութեան անյետաձգելիութեան մասին ես առաջադրել եմ ձեզ անցեալ մարտի 3-ից թիւ 6848։

Ըստ որում բոլոր նախկին փոխարքայ յարձակումները հայերի եւ մուսուլմանների կողմից պէտք է արվեն մոռացութեան (որ, ինքզինք, չէ վերաբերում քրէական պատասխանատուութեան եւ նիւթականորէն պատճառած վնասների համար) եւ ամեն


ւին չեն կարող պատճառ լինել որ եւ է պատճառական արշաւանքի համար, իսկ եթէ նոր անկարգութիւններ ծագելու լինեն, տեղական իշխանութիւնները ամեն ջանք պէտք է գործ դնեն անմիջապէս եւ եռանդուն կերպով ճնշելու նրանց ամենավտանգութեան միջոցներով, ենթարկելով անկարգութեան բոլոր հեղինակներին եւ յանցաւորներին օրինական պատասխանատուութեան, որովհետեւ միայն այն յէպքով, երբ ազգաբնակչութիւնը լիակատար համոզված է, որ իշխանութիւնը վճռողաբար եւ հաստատակամ կերպով որոշել է օգտվել իրան վերապահված բոլոր միջոցներով երկրում խաղաղութիւնը վերահաստատելու համար, եւ որ կարգապահութիւնը խախտելու համար արված իւրաքանչիւր մի փոքիսիւս կերպով կը պատժվի, ահա միմիայն այդ միջոցները կարող են բաւականաչափ երաշխաւորութիւն ծառայել երկու թշնամացած կողմերին հանգստացնելու եւ նրանց մէջ խաղաղութիւնը եւ կարգը սմբապնդելու համար։

Մասնաւորապէս այն գիւղերը, որոնց ժողովուրդը յանցաւոր կը ճանաչվի անկարգութիւնների մէջ, պէտք է ենթարկվեն վարչական տուգանքի, համաձայն մարտի 30 ին թիւ 350 ով իմ առաջադրութեան մէջ մատնանիշ արված ցուցմանը ներքին եւ անցեալ մարտի 30-ին իմ հրատարակած պարտագիր որոշումների, կամ թէ իւրաքանչիւր անգամ այդ մասին յատկապէս ինձ դիմելով։

Այս պատճառով զինաթափութեան հարցին եւ կովկասի ազգաբնակչութեան ընդհանուր զինաթափութիւնը առ սյժմ վաղաժամ եւ անպատակաւարմար համարելով, եւ նորից կրկնում եմ իմ նախկին թիւ 6830-ի առաջարկութեանը այդ առիթով արդէն արված կարգադրութիւնները, նրան կցված պարտագիր որոշումները, նոյնպէս եւ իմ զինատանն անցեալ մարտի 18 եւ 20-ին թիւ 6151-ի հաղորդագրութիւնը, ու խնդրում եմ ձեր գերագնացութեանը ամեն միջոցներ ձեռք առնել որպէսզի այն անձինք, որոնք զենքը գործողութեան յանցաւոր նպատակներին համար, անպատճառ զինաթափ անվեն։

Ճանապարհների հաղորդակցութիւնը ապահովելու համար նոյնպէս

ՍՈՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ



ԸՆԿԵՐՈՑՍ Յ. ԱՂՍՍԷՐԻՆ, (Շար. Ասիւ. քիւրի)

— Է՛ր ուրեմն շատ աղէկ, հիմա ծայրէ ծայր եւ կատարես ճշդութեամբ պիտի պատկեն ինչ որ տեսած ես—հրամայեց Օսման պէյ խօսքը կրկին ինձի ուղղելով—բայց լա՛ւ ուշադրութիւն քէ, կատարեալ ճշգրտութեամբ կըսեմ, կը հասկանաս։

— Այո՛, էֆէնտիմ, շատ լաւ կը հասկնամ եւ վստահ եղէք որ զուտ ճշմարտութիւնը պիտի բռնեմ—պատասխանեցի խոնարհութիւն մը լնելով։

— Բայց ոչ հայու ճշմարտութիւնը, աս ալ հասկացա՛ր—աւելցոց խոշոր ցուցամատը սպառնացին ճօճելով—այլ բուն ճշմարտութիւնը, այն ճշմարտութիւնը, զոր հօճա էֆէնտին

արդէն յայնանձ է. եթէ տարբեր բան պատմելու ըլլաւ ՅՁ առամդ կողորդ կը թափեմ։ Սկսէ՛ նայինք, եւ սկսայ մանրամասնօրէն պատմել ամբողջ զէպքը բնականաբար կարելի եղածին չափ մեղմ բացատրութիւններ փնտռելով հօճա էֆէնտինի վարմունքը նկարագրելու համար։

Պատմութիւնս քանի կը յառաջանար, հօճան ալ նոյնքան աւելի կը անհանգստանար իր աթոռին վրայ, իսկ քոմիսէրը, որ ճակատին գետնախընձորները շփելով զէմքի զժկամակ ծամածոտութիւններ կընէր, յանկարծ ընդհատեց զիս։

— Ինձի՛ նայէ, կո՞յր ես, չե՞ս աններ որ գլուխս կը ցաւի, քու դատարկաբանութիւններդ լնելու ես ո՛չ կարողութիւն ունիմ եւ ո՛չ ալ ժամանակ. կարճ կապէ եւ միայն սա հարցումիս պատասխան տո՛ւր, աս հայր ի՛նչ հայհոյութիւն բրաւ հօճա էֆէնտինին։

— Հայհոյութիւն... բայց պէյ էֆէնտի կարծեմ քիչ առաջ ըսի որ ես հայհոյութիւն չեմ լսած։

— Լի՛րք անհաւատ, ի՞նչու սուտ կը խօսիս, մօրուքիս չհայհոյեց—պայթեցաւ վերջապէս մ'օլլան եւ տեղէն վեր ցատկելով յարձակողական դի՛րք մը առաւ։

— Մի՛ յուզուիք հօճա էֆէնտի, կա՛ղաչեմ մի յուզուիք ի՞նչ կարեւորութիւն ունի ստոր վկայութիւնը—միջամտեց քօմիսէրը եւ թեւէն բռնելով դարձեալ տեղը նստեցոց մ'օլլան։

Այդ միջոցին քօց պատահանէն ձայն մը լսուեցաւ—պէյ էֆէնտի՛ կը հրամայէր։

Թիւրքի գլուխ մըն էր, որուն քօմիսէրը ձեռքի նշանով մը պատասխանեց եւ դուռը բացուելով չըլուէն պաղպաղակալման մը ներս մտաւ իր ամբողջ կարգուսարքով։

— Լաւ ժամանակին եկար էօմլի՛ր—ըսաւ քօմիսէրը—զուրա կը ցաւի,

առատօրէն երկու պնակ լեցուր, մէկը հօճա էֆէնտինին միւսը ինձի։

Պաղպաղակին առաջին զգալը արդէն մեղմեց հօճային զայրոյթը, իսկ քօմիսէրը իրարու ետեւէ քանի մը խոշոր դգայ կլլելէ յետոյ ինձի գտնաւով։

— Ի՛նչ քու կեալուրի խնջովդ սուտ վկայութեամբ իբր թէ բարեկամ պիտի ազատես, բայց նորէն կըսեմ, նպատակիդ չը հասնելէ վատ այս ընթացքով դու՛ն այ ի՛նչ պիքսայութեան պիտի արժանանաս։ Հիմա կորսուէ՛ գնա, քեզի մասնակու ժամանակ կուտամ, որպէսզի գալ անգամ նոյն սուտերը չըրկնես կը հասկընաս, քու բաժնդ այ ըսելիքդ ալ արդէն մէկ փարայի կարեւորութիւն չունին, խնդիրը շատ պարզ է, Ուրեմն գնա կորսուէ՛, մինչեւ որ նորէն կանչեմ քեզ։

Կրկին գետնամած բարեւ մը տալով եւ Առաքելին հետ զարձակ ցաւազին ակնարկ մը փոխանակելի ետքը

տննադատելու է ամենալուրջ ու յայտնաբերելու դարձնել, որովհետև ճանաչողական հարցերը հարցադրված լինելու պարագային կարելի է վերահաստատել երկրի տնտեսական կեանքը Այդ պատճառով ճանաչողական հարցերը ազատ երթևեկելու են, պետք է ապահովել պահպանելու նպատակադրման դասակարգումը, համապատասխան սեղանի պայմաններին, եւ ամեն մի յանցաւոր փորձի դէմ վրձնական միջոցներ գործադրելով:

Երկրորդ հիմնադրամակն խաղաղաց ներու համար հարկաւոր է, որ արժան կարելի է շուտով հնարաւորութիւն տալ այն բնակիչներին որոնք ընդհարումներ ժամանակ հարկադրված էին խողովակները գրեզերը, իրանց սովորական պարագայի շքերքը վերսկսելու եւ այդ տեսակէտից էլ ցանկալի է թոյլատրել, հնարաւորութեան շափ եւ սեղանի պայմաններին հետ յարմարվելով գրեզական հասարակութիւններին համարժեցումներ կազմելու: Վերջիններս գրեզային խեղճութիւններն ժամանակ զիւրացնելու հողաբաժիններին յօժարակամ փոխանակութիւն կատարելը:

Բացի դրանից անհրաժեշտ է ամենալուրջ ու յայտնաբերելու դարձնել ազգայնականութեան ներթափանցողական վրձնակի վրա այն տեղերում, որտեղ ընդհարումներ են եղել եւ եթէ հարկաւոր լինի, խնդրամատոյց լինել, ընդունված կարգով վերականգնելու համար թեթեւացնելու հարկերի վճարումը եւ օժանդակութիւն տալու գրեզացիներին տնտեսութիւնը վերականգնելու եւ սերմնացանի կտրիքները հողաւոր համար, ինչպէս սեղանի մատակարարողական գումարներէն եւ ուրիշ պահանջարկ միջոցներէն որտեղ այդպիսիները գոյութիւն ունեն նոյնպէս եւ ընդհանուր կայսրութեան մատակարարողական գումարից:

Ի վերջոյ, կրկնելով արդէն նախապէս իմ տուած հրահանգները ազգայնականութեան դէմ այնպիսի պոտնական միջոցներ գործադրելու մասին, ինչպիսիներն են զէնքը, էկզիկուիցիան, սոցիալիստարտիվ կայանաւորութիւնները եւ քաղաքները, միմիայն ծայրահեղ եւ անհրաժեշտ ճանաչված զէնքերով ինքնուրու մեծերը գերազանցութեան հոգ տանել շատ պահանջու այն անձանց խափն կատարվող քննութիւնները, որոնք ազմիստարտիվ կարգով կուսակաւոր-

ված են հայ-թուրքական ընդհարումներին պատճառով եւ անմիջապէս ազատել նրանցից այնպիսիներին, որոնք զէնք մինչեւ այժմ մեղադրական ոչինչ փաստեր չեն գտնվել:

Իմ այս առաջադրութեան պատճէնը հարկադրեց նահանգապետին նրանով զեկազարվելու եւ հարկաւոր կարգադրութիւնները անելու համար:

Ստորագրեց զենեքաւոր-ազիւտանտ կոմս Վարդգոյ-Պաշկով:

ՄՇԱԿ

### ՕՐԸ ՕՐԻՆ

Սերպիան, պարթեան թեթեւալիւի այս պետութիւնը, միշտ ապրած է եռուզեռումի մէջ, իրարու ներհակ հակեր միշտ կը փշեն այս ափ մը հոյի վրայ, կարելի է ըսել, թէ նա վայրկեան մը իսկ չէ ապրած խաղաղ կեանքով, օր նոր, կեանք նոր:

Օրեր առաջ հեռագիրները ծանուցին թէ թագաւոր Բաշիշի յանձնած է նոր նախարարական դահլիճի կազմակերպումը: Բաշիշը կառավարութեան երաստանակները դարձեալ ձեռք կառնէ այն պատճառով՝ ինչ որ իրեն օնկումը փութացուցեր էր: Իսկ այս նորօրինակ երեսօթ մ'է որ կուգայ բարդուիլ այն աարօրինակ կացութեան վրայ՝ որուն Սերպիան Ենթակայ է նոր կեանքի մը ստեղծագործումէ իվեր:

Բաշիշ կիյնար Պէլկրատի մէջ գտնուող Աւստրիական զազտի գործակալատներու վարպետութիւններու եւ արքայապաններու թագաւորի բարոյականին վրայ ճնշող կրծօնական արարքներու շնորհիւ: Հիմա բեր նա գարձեալ կանցնի կառավարութեան գլուխ, սերպ ժողովուրդը աչերը իրեն վրայ յառած, յուսալից կը սպասէ Սերպիոյ ազատումին, տարիներէ իվեր զինքը տանջող ու

մաշող աւստրիական միջամտութեան մը դժխէճ գառանցանքէն եւ արքայապաններու շնական ու լիրբ վարժումքէն:

Սերաւի, պէտք է ենթադրել թէ այլ եւս հնչած է վերջին ժամը: Սերպիան այս անել կացութեանէ ազատելու համար հարկաւոր է երկաթէ ձեռք, անկուն կամք ու յախուռն գործունէութիւն, թէ չէ անոր այս երկու երդուեալ թշնամիները յարալէզի մը պէս կը քամէին անոր ծուծը ու արիւնը եւ կը մահացնէին:

Այս կը պահանջէ Սերպիոյ քաղաքական արժանապատուութիւնը, ինքնուրոյնութիւնը եւ յառաջդիմական կեանքը: Իսկ եթէ Սերպիան չկարենայ իր վարժունքով ստիպել աստրիական կառավարութիւնը որ յարգէ իրեն ինքնուրոյնութիւնը եւ կառավարական կամքը, եթէ չկարենայ արքայապաններու իշխելու այն ժամանակ Սերպիական արժանապատուութիւնը բոլորովին փճանալու է արտաքին աշխարհի առջեւ:

Բաշիշ գիտակ իրաց այս փճակին կը յօժարի կազմակերպել իր դահլիճը, նա պիտի կարենայ արդեօք ձեռք առնել պէտք եղած չափերը, ունենալ այն անընդուն կորովը, անարգել ամէն խոչնդոտ եւ գործադրել իր կամքը:

Բաշիշ՝ չունի Սթանպուլովի մէ կորովը ու տոկունութիւնը, նա խառնուածքով յարմարող է, դաւանած սկզբունքները պաշտպանելու ոչ այնքան հակամէտարդէն այս բարեմասնութիւններու պակաս էր որ հին արմատական կուսակցութիւնը երկուքի կը բաժնէր:

Հին արմատական կուսակցութիւնը, իր կազմութեանը մէջ ողջամիտ եւ բարեմասնութիւններու տէր անձինք կը պարունակէ, նա կը ներկայացնէ ազ-

գային կեանքը, ոգին ու ձեռք-տունները եւ կը վայելէ ժողովրդին յատուցութիւնը: Այս կուսակցութեան էութեան պատմութիւնը, ներքին կառավարական ինքնուրոյնութեամբ եւ միջազգային յարաբերութիւններու մէջ ազգային անկախութիւնը պաշտպանելու համար մըղուած կուսակցութիւն է զրաւուած: Կուսակցութիւն մը անկեղծ ազգային ոգով մը կազմակերպուած, հերոսական անցեալի մը տէր, անոր միայն կը վայելէր տաղնապի այս ծանր վայրկեաններու մէջ ձեռք առնել կառավարական զեկը:

Պիտի կրնայ ի գլուխ հանել իր այս պաշտօնը մութ է, սակայն անկասկած նա առնական կուս կը մղէ ու կը մաքառի մինչեւ վերջ:

Բաշիշը լուծեալ հաշակեց երեսօթականութիւնը, ու կը ձեռնարկէ նոր ընտրութիւններու, այսպէս կը յուսայ երեսօթականութեան մէջ ունենալ այնպիսի մեծամասնութիւն մը, որով կարենայ վերաշինել Սերպիան, ու անյողողոց գործադրել իր առաջադրած ծրագիրը: Պիտի յաջողի՞ մեծամասնութիւն կազմելու հաս իսկ է հարցը: 2.

### ԿՈՎԿՍՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը հետեւեալ հեռագին է ուղարկել Թիֆլիսի թեմի առաջնորդին

«Տեղեկութիւն ստանալով խաղաղարար ժողովների ընտրութեան մասին, որոնք կանոնաւորելու են թուրք-հայկական յարաբերութիւնները պիտաւիներին, գաւառապետներին, նահանգապետներին եւ փոխարքայի մօտ եւ մասնաժողովների անդամների ընտրութիւնը պէտք է կատարվեն այն կարգով, ինչ կարգով էլ ընտրուել էին թուրք-հայկական անցեալ համաժողովի անդամները, առաջարկում եմ ձեզ պատշա-

ղուրս ելայ: Երկրորդ հրահանգը շուտապէս Հազիւ երեք օր անցած էր, Հիւսնի չափուը վերադարձնելու սկիզբն առ ու սուրճ մը խմեց զեռանակողիս մէջ եւ իր անսպասկենսազրուցութեան նոր գրուագներ պատմելով՝ առաջնորդեց զիս քօթիսէր պէյին քով:

Միևնոյն սենեակին մէջ հարցաքննութիւնը նոյն ուղղութեամբ կրկնուեցաւ, միտյն թէ այս անգամ գործը հանդիսաւոր կերպարանք մը առած էր Մօլլային հետ ուրիշ երեք անձանցով մարդեր ալ կային որոնք ապշեցուցիչ մանրամասնութիւններով ճոխ վէպ մը պատմեցին, որուն վերջը քարանդակ էր, թէ Առաքելը ամենազոտտ բացատրութեամբ մը հայհոյած էր հօճա էֆէնտիի նուիրական մօրտըքին: Առաքելը նոյն սրտաճրմիկ վիճակին մէջ էր, աւելի նիհարեցած ու սոճոյն, սակայն այս անգամ չէին թողած որ գլուխը կապէ, եւ ոչ իսկ սկզբնից ցաւի պատրուակին

տակ, որովհետև հօճան սկիզբէն իվեր կուրանար ձեծի խնդիրը: Իսկ այս վերջին հարցաքննութեան ամբողջ ընթացքին մօրտըք անբնական կերպով վեր կը բռնէր, անչույս աւելի ուժ տալու համար հայոյանքի ամբաստանութեան: Պահ մը համարձակեցայ պնդել որ զէնքի միջոցին Առաքելի խանութիւն մէջ ինձմէ գատ դուրէն մարդ չկար, հետեւաբար ուրիշ վկայ չէր կրնար ըլլար բայց այս անխոհեմութեանս միակ արդիւնքը այն եղաւ, որ հօճան ու իր վկաները կատարել լուսանքներով վրաս վազեցին, սակայն քօթիսէրը ուժգին ապտակ մը իջնցնելով երեսիտ, փրկեց զիս անոնց ձեռքէն: Ի վերջոյ քօթիսէրը յայտնեց, որ գործը հարցաքննիչ գատաւորին պիտի յանձնուի, որով հետեւ հօճա էֆէնտին գատ կուզէր բանալ:

Այս նոր սպառնալիքին տակ սենեակէն դուրս ելած էի, երբ Հիւսնի չափուը թեւէս բռնելով խափէ—օճա-

խին տարաւ զիս եւ հոն անկուէն մը քաշելով սկսաւ բացատրել թէ ինչ մեծ փորձանքներ պիտի գային թէ՛ Առաքելին եւ թէ իմ գլխուս, եթէ խնդիրը զատարանի առջեւ ելլէր: Ու զիս պահ մը սարսափի մէջ թողնելէ ետքը յայտնեց, որ ինք կրնայ մեզ այդ բոլոր երեւելի եւ աներևոյթ փորձանքներէն ազատել, եթէ պզտիկ գրամար մը, 15 ոսկի իր տրամագրութեանը տակ զնէինք: Պատասխանեցի թէ խնդիրը Առաքելէն կախուած է, քանի որ այն է ամբաստանեալը: Ասոր վրայ զնաց Առաքելն ալ բերաւ եւ մեզի սպառնացող վրտանքները անոր ալ մէկիկ մէկիկ բացատրելէ յետոյ պահ մը մեզ տառնաին թողուց, որպէսզի խորհրգակցինք:

Կը կարծէի թէ Առաքելը վայրկեան մը իսկ չպիտի վարանէր փրկութեան այդ առաջարկը ընդունելու: Բայց Հիւսնի չափուը 4-5 անգամ զնաց եւ զեռ մեր խորհրդակցութիւնը

չէր վերջացած:


— Ծօ աղբար՝ ի՞նչ կըսես, ի՞նչ պէս տամ, 15 ոսկին ինձի համար դրամագլուխ մըն է:

Այս էր իր միակ պատասխանը, զոր անդադար կը լեղեղէր կողկողապատրաստականութիւն յայտնեցի 3 ոսկին ես իմ յսակէս տալու, սակայն ատոր ալ միակ արդիւնքը այն եղաւ, որ իր յանկերգին 15 թիւը 12 ի իջեցուց եւ այս անգամ ալ կը կրկնէ:

— Ծօ աղբար՝ ի՞նչ կըսես, ի՞նչ պէս տամ, 12 ոսկին ինձի համար դրամագլուխ մըն է:

Ալ բարկացած ու յուսահատած դուրս ելայ եւ տուն դնացի:

(Շարունակելի)



ճաւոր քաղաքացիական իշխանութիւնի տեղեկութիւն ստանալուն պէս հրամանագրել ձեր թիւում կատարել ընտրութիւնները սովորական կարգով եկեղեցիներում եւ ծխերում:

Էջմիածնի Սինոդը մի գրութեամբ յանուն Թիֆլիսի կենտրոնական նրպատամատոյց Յանձնաժողովի յայտնել է, որ Սինոդը, վեհափառ կաթողիկոսի այս տարվայ մարտի 22ին արձակած կոնդակի համաձայն, որոշել է յատկացնել իր միջոցներէջ քրասան եւ հինգ հազար (25 000) ռուբլի յօգուտ կովկասի հայ ազէտեալների եւ պատուիրել է իր զանազաններն էասցնել հետզհետէ այդ գումարը նպատամատոյց Յանձնաժողովին:

Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդն եւս ուղարկել է նոյն նը պատակով 7000 ռուբլի, խոստանալով ուղարկել զարձալ 300 յ. ընդամէնը 10,000 յ. իսկ 100 000 ռուբլի յատկացնելու ծրագիրը ջուրն է ընկել:

—o—

Ղաղախ, 17 ապրիլ

Հայերի եւ թուրքերի վեհաժողովի քանակը վերաստուգելուց եւ վերաքննելուց յետոյ ստացվել է հետեւեալ արտայայտութիւն. թուրքերը պէտք է վճարեն հայերին ընդամէնը 208,000 ռուբլի, իսկ հայերը թուրքերին 154,000 ռուբլի: Հայերից ամենաշատ վեհաժողովները եղել են Ղաղախ քաղաքի բնակիչները իսկ թուրքերից— գիւղացիները: Պէտք է լէվիզել փոխադարձ վճարի համար ժամանակ նշանակել է մինչեւ ապրիլի 25ը:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Անգլիոյ Բ. Դրան տուած վերջնագրի պատասխանը սակաւին Պոլսէն չէ հասած. արուած տասնորեայ պայմանաձամբ, այսօր շաբաթ կը վերջանայ: Անգլիական կառավարութիւնը հաստատակէս որոշած է, իր դրած պահանջներու գահացումը լիովին ստանալ:

Կը հաւաստեն թէ ծովային ցոյցը անխուսափելի է, նոյն ժամայն թրքա—եգիպտական եւ կրի վրայ զորքեր պիտի զրկուին, որպէսզի թուրք զինուորները անկէց վաճարեն: Արգէն Գահիրէ թնդանօթիեր ուղարկուած են: Հետեւեալազօրաց գունդ մը Մալթայէն դէպի այս վիճելի երկիրը ուղարկուելու է: «Խայժ» լրագիրը արժանահաւատ ազբիրէ կիմանայ թէ՛ եգիպտոսի թրքական զոյժակատար Մուլթար բաշան Սուլթանը կը խրախուսէ եզեր որպէսզի դիմագրէ, Անգլիան կը պահանջէ անոր այս պաշտօնէ հեռացումը:

Աթինաէն քիչ հեռու, Բալէրոն ծովախորշի մէջ, խարսխած է Անգլիական նաւատորմի մը Պէրէսֆորդ ծովակալի հրամանատարութեան տակ Այս նաւատոր-

մ/զը 21 շոգեհաւերէ բազկացած է, ստոնց մէջ կը գտնուին «Պուլվէր» և «Իրրէզիսիպլ» և «Իմրազապլ» և «Պորմիտապլ» զրահանաւերը ու «Իարնարվոն», «Լիվիադան», «Սըֆօզլ» և «Լանգասզլ», «Պիլնէրվա» և «Պարգհամ» յաճանաւերը:

— Թրքա—եգիպտական միջադէպի յարգարժան մասին, երլ տըզի մէջ ամէն օր ժողով կը լլայ: Զինուորական կուսակցութիւնը որուն պարագլուխն է Սուլթանի ատենադպիր Իզէդ պէյը, կը պնդէ դիմագրել, թուրքերը իրենց ընդդիմադրութիւնը արդարացնելու համար, հետեւեալ առարկութիւնը կը ընեն: Թուրք կառավարութիւնը կը կարծէ թէ՛ եգիպտական իշխանութիւնը կուզէ թապալտիրապետել, որպէսզի թուրքիոյ հետ միասին Սինանեան ծովածոցին տէր լլայ, որ կրնայ հարիւրէ աւելի յալթանգամ զրահանաւերու ապաստանարանը ըլլալ: Ինկէ կարելի է թէ եգիպտական երկիրը և թէ Սուէզի ջրանցքը պաշտպանել: Ահապան, որ այս ծովածոցէն 15 քիլոմէթր հեռաւորութեան վրայ կը գտնուի, նշանակուած է որպէս սկզբնակէտ Հէճազի երկաթուղոյ:

Սուլթանը կը վախնայ որ չըլլայ թէ՛ այս նորակառուցանելիք երկաթուղին ամէնանպատաւոր վայրը Անգլիոյ ձեռքը անցնի: Երկրորդ մէջ կը կարծեն թէ՛ Անգլիան Խըտիվի համաձայնութիւնով այս վերջինը խալիֆ պիտի հռչակէ: Իսկ այս միախմբելու է ապստամբ սրապները: Մէքքէի էմիրը խալիֆայութեան փոփոխումը կընդունի և կը հաստատէ:

— «Տէլլի թէլէկրաֆ» լրագիրը կիմանայ թէ՛ Սուլթանը կը շարունակէ դիմագրել, և կը պնդէ որ թրքա—եգիպտական հարցի լուծումը միջազգային համաժողովի մը յանձնուի:

Երկաթուղին մինչեւ Ահապայի երկրարածինը ատարտելու համար թուրքիան իր բոլոր ճիգը կը թափէ:

Էլ Արիշի կառավարչը խըտիվի կողմանէ պաշտօնանկ եղած է, որովհետեւ ժամանակին չէ իմացուցեր թուրք զինուորներուն եգիպտական երկրի մօտենալը: — Եգիպտական եզերապահ շոգեհաւ մը, ճ թնդանօթով զինուած, Սուէզի ջրանցքին, արեւելեան եզերքը մեկնած է:

— Կը ծանուցանեն թէ՛ «Աֆղանիստան» անուն անգլիական շոգեհաւը, պարսից ծովախորշի նաւահանգիստներէն մին հառած է, ուր հոն կը հանէ թնդանօթները, հրացաններ և հրանիւթ պարսկական կառավարութեան յատկացեալ:

— Պարսկական յանձնախմբի թէ՛ հրանէն մեկնելը, պարսից զեպանը Բ. Դրան ծանուցած է: Այս ծանուցազրոյս պարսից զեպանը յոյս կը յայտնէ թէ՛ պարսկական յանձնախմբին մինչեւ տեղոյն վրայ ժամանումը, թուրք զինուորները արգէն քսուած կը լլան վիճելի երկրարածնէն: Երկայ յանձնախմբը թրքականի հետ միասին յարգարելու է սահմանեան այս շատ փոփոկ հարցը: Պարսկական յանձնախմբի գլուխը կը գտնուի Բարիզի զեպան, Մէրզա Մահմուտ խանը: Երկրորդ Պարսկաստանի գարձած էր Միրզա Մահմուտ խանը իր հետ միասին երկու ատենադպիր, երկու պաշտօնեայ և բժիշկ մը ունի:

— Պոլսէն կը հեռագրեն թէ՛ զինուորական նախարարութեան հասած լուրերու համաձայն, Եւմէնի մէջ Յէյդի բաշայի հրամանատարութեան տակ գտնուող զօրագունդ մը, Սանաէ քիչ հեռու, Արիսի մօտ, Մահմուտ Եահանյի հրոսակախմբի հետ ընդհարում մը ունենալով չարաշար յալթա հարուեր է: Մարշալ Յէյդի բաշան շուտափոյթ օգնութիւն կը խնդրէ:

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

«Խայթերի» գործակատարութիւնը Գիէվէն կիմանայ թէ՛ Գիէվի ընդհանուր կառավարչը կոմս Ալէքսի Իկնազիէզը սպաննուած է: Մանրամասնութիւնք կը պահուին:

— Պղանտարտա լագրի Բեթերոպուրկեան թղթակիցը արժանահատ ազբիրէ կիմանայ թէ՛ Վիթէն Հոմմի զեպան նըշանակուելու է:

— Բոսդովէն կիմացնեն թէ, ոստիկանութիւնը ռումբի գործարան մը երեւան հանած է, ուր գտեր է 500 ռումբ, նոյն ժամայն ոստիկանութիւնը ձեռք ձգեր է ցանկ մը, այս ցանկէն սկիւլայտնի կերելի թէ հազարէ աւելի ռումբեր, Բոսդովի մէջ պատրաստուած, Ռուսիոյ այլ և այլ քաղաքները զրկուած են:

— Մոսքովա—Նիժնի—Նով օրոտ երկաթուղիի գիծին վրայ գտնուող փոքրիկ կայայանի մը մէջ, գիւղացիները շոգեհաւք կեցուցեր են, որուն մէջ քանի մը նորընտիր երեսփոխաններ կը գտնուէին: Գիւղացիները մօտակայ գիւղէն քահանայ մը կը կանչեն, և երեսփոխանները կը ստիպեն միւս ճանապարհորդներու առջեւ երդուիլ թէ՛ անոնք Տումարի մէջ ներկայացնելու և պաշտպանելու են գիւղացիներու շահերը, և Բեթերոպուրկէն ետ չպիտի դառնան մինչեւ որ իրենց համար հող և ազատութիւն ձեռք չձգեն:

— Մոսքովայի կառավարչը Տումարի վրայ ելած մահափորձը վերջին աստիճան յուզած է մրտքերը: Յարսթէ Սէլօի մէջ խրրտուած մեծ է:

Կոստատարագէնեա Տումարի րացման առթիւ շատ խիստ միջոցներ ձեռք առնուած են, կը կարծուի թէ կոստատարագէնեա Տումարի րացման ճառը Մեծն իշխան Վլատիմիրը պիտի կարդայ: Լուր կը շրջի թէ՛ Տումարի և կառավարութեան միջեւ անհամաձայնութիւն ծագելու ըլլայ Բեթերոպուրկի մէջ պատերազմական գրութիւն պիտի յայտարարուի:

Թալիկեան պալատին շուրջը 9 զօրացնող կան զետեղուած: Այս պալատին սրահներէն մին հիւանդանոցի վերածուած է. աշխարհի մէջ գտնուած երեսփոխանական պալատներէն, ուսականը առաջինն է սր հիւանդանոց ունի:

— Լամստօրֆի պաշտօնէն հեռանալը վերջնականապէս որոշուած, լաւի կը փոխանակէ Գոթէնհակի զեպան Իզվոլսքին:

Ինչպէս Լամստօրֆ, Մուրափիէվ նոյնպէս և Իզվոլսքին, սակէ 5 «արի առաջ թուրքիոյ զեպանը ելած է, նա այն ժամանակ Ռուսիոյ Մանչուրիոյ մասին վարած յոռի քսղաքականութեան հետեւանքը նախատեսելով զգուշացուցած էր բէգերոպուրկեան կառավարութիւնը. սակայն անօգուտ:

— Կայսերական ընտանիքը Յարսթէ Սէլօէ Բէգերհոֆ կը մեկնի. կաջութիւնը վտանգալից է:

Մ. ԱՆԴՐԷՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.  
Ընդհ. Վաճառական-Գործակատարներ  
Կընդունուին ամէն կարգի յանձնարարութիւններ Անգլիական ու է տեսակի ապրանք համար, նմանապէս կը տրուին պատուէրներ:  
Աւելի մանրամասնութեանց համար զիմել մեր մասնաւոր գործատեղին:  
8-9 New Street Bishopsgate,  
London E. C.

Ա. Ղ Ա Ս Ի  
Ջէյթլէնի հերոսներ դիւցազներգութիւն, հինգ արարուած, եօթը պատկեր:  
Գիմել հեղինակին փոսթ ուսթ թանթ. Գահիրէ. Եգիպտոս  
Գին Ֆր. 1 50

« Ա Ր Մ Ի Ի »  
Կ ի ս ա մ ս ե ա յ  
Ազդային, Գրական, Քաղաքական  
Տարեկան բաժնեգին է մէկ տուար Լմբերկայի, 6 ֆրանք արասահմանի համար:  
Գիմել հետեւեալ հասցէին՝  
Էտիգօր օֆ «Լմբերկ» Բ. Օ.  
Պօքս 2191, Պոսթօն Մաս